

րեւայ ժառանգեալ Ուրարտական նախնիքներէն, միշտ համբաւաւոր մնաց հիւսուածեղէններու աշխարհին մէջ:

Հայոց ամէնէն կարեւոր դոյնը կարմիր մըն էր, որուն իրենք Որդան (կարմիր) եւ օտարները «դիրմիզ» կ'ըսէին: Որդանի մասին անջատ գլուխ մը տրուած ըլլալով՝ քիչ վերջ հոն պիտի խօսիմ:

Դուին—Արտաշատ եւ Անի նշանաւոր էին իրենց ներկարաններով: 1064ին երբ Անի Սելճուքներէն գրաւուեցաւ, դերուած բազմաթիւ հայ արուեստագէտներուն շարքին կը յիշուին նաեւ «զշարարա» (Կ. Գանձակեցի, զլ. Ին): Բաւը կրնայ երեք կերպով վերծանուիլ: Նախ իրր շապար ընող կամ ներկող: Յետոյ ներկի մէջ դալն տոկուն ընելու համար կը դործածեն շիպ կամ շապ (պաղլեզ) որ կրնայ պարսկերէն եղած ըլլալ: Այս շիպ (պաղլեզ) բառէն Ղարաբաղի հայ բարբառին մէջ ունինք շպու՛մ կամ շպե՛լ, այսինքն պաղլեզե՛լ, որ ներկարարութեան արհեստին մէկ կարեւորագոյն մասը կրնայ նկատուիլ: Երրորդ բացատրութիւնը Գանձակեցիի «շարարա»ի համար հաւանօրէն ըլլայ պարսկերէն շիպ բառէն, որ Գէորգ զպրի Բառարանին համաձայն «տեսակ իմն դիպակի՝ որ ոտապանակի ոսկեթելիւ եւ մետաքսիւ»: 1387ի ձեռագիր բառարանիս համաձայն՝ շպարե՛լ կը նշանակէ գեղեցկադարձել: 1624էն Սիմէոն քա՛հ. Ջուղայեցիի իմ շատ ընտիր հաւաքածոյ եւ բառարանս ունի շեպարե՛լ, գարդարե՛լ նշանակութեամբ: Նոյն դարէն ուրիշ մէկ ձեռագիր բառարանս շպարե՛լ, գեղեցկադարձե՛լ, իսկ 1729ին տպ. բառարանս՝ շպարե՛լ = գեղեցկադարձե՛լ կամ դեղագործե՛լ: Գեղագործե՛լ բնական է դործածուած է հին իմաստով՝ որ ներկել կը նշանակէ:

Մեր ձեռագրաց յիշատակարաններուն մէջ յաճախ կը հանդիպինք հայ ներկարարներու անուններու: 1330ին Մանազկերտի Խանազան զիւզը կը յիշուի Լուսեր ներկարար: (Հայապատում, փոքր, հտ. Գ, էջ 163): Նոյն դարուն ներկարար Թաղէոս մը (Էջմիածին, 1945 Հոկ. էջ 41ա): 1467ին Տիվրիկցի ներկարար Գրիգորի որդին Գրիգոր արեղայ կ'ըլլայ ձեռագրի մը մեկենասը: (Յուց. վաս. Ձեռ. էջ 448 449)⁽¹⁸⁾: 1517ին յԱմիթ կը յիշուի ներկարար Կիրակոս: (Յուց. Ս. Ղազարու, հտ. Բ, էջ 482): Սիմոն Լեհացի կը յիշէ Ամասիոյ հայոց մէջ «անուանի մարդիկ՝ ոսկերիչք եւ պոյախանաճիք» (էջ 186): 1866ին կը յիշուի «պոյանի (ներկարար) մահտեսի Ովանես» յԱտանայ: (Յուց. Հալէպի, Բ հտ. էջ 7): 1667ին կը յիշուի «Հալէպցի ներկարար վարպետ Եուսուֆ»: («Բազմապէպ», 1933, էջ 310բ.): 1685ին Արզնի մօտ կը յիշուի ներկարար Յովհաննէս: (Յուց. վաս. Ձեռ. էջ 442):

Ներկարարութեան մեր պատմութեան համար նիւթ անտարակոյտ չի պակսիր, միայն պէտք է խղճմտօրէն պրպտել եւ մէջտեղ հանել:

(18) Նոյն այս Գրիգոր արեղան զրած է աւետարան մը 1480ին, ուր դարձեալ կը յիշէ իր Գրիգոր ներկարար հայրը: (Թորոս Աղբար, Ա մաս, էջ 216):